ոգւով և ուղղութեամբ, ինչ որ նորա կեանքի յիշեալ դէպքերը։ Սակայն մոռծել, որ Ս. Լուսաւորիչ, ունենալով որդիք և թոռներ, ունենալով բազմաթիւ հոգևոր և հոգեսուն զաւակներ, ինչպէս էին Ս. Տրդատ արքայն և այլ մերձաւոր աշակերտներն ու բարեկամները, բոլորովին անծանօթ լինէր իւր ճգնութեան ժամանակ, և նոցանից ոչ ոք չէր տաքրքրուէր նորա մասին, անշուշտ, հակառակ է մարդկային բնութեանն և ամէն ժամանակի ու շրջանի ընկերական բարքին։ Ուստի կարող ենք հաւանական համարել, որ Ս. Գրիգորի իրեն ցանկութիւնն էր՝ այն կտակն աւանդել իւր մերձաւորներին, ինչ որ աւանդութիւնը դրել է ս. ճգնաւորների և սերովբէների բերանը. որով և կիմանանք, թէ ազգիս Լուսաւորչի մահն և անփոփոխմն անյայտութեան մեջ պահուեցան այն պատճառով, որ նորադարձ ժողովուրդը կատարելապէս ընտելանայ քրիստոնէութեան գաղափարին և չլինի թէ, հեթանոսական երկդիմի պաշտամունքներին հետևելով, պաշտօն մատուցանէ իւր Լուսաւորչին»։

Քանի որ Դ. դարու յիշատակարանների մէջ Ս. Լուսաւորչի մահուան հանգամանքների վերայ որ և է ակնարկ չկայ, դժուար է, անշուշտ, հաւատալ թէ այդ աւանդութիւններն աւելի ուշ ժամա-

---

* Մովս. Խոր. Պատ. Բ.